ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ «ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂ ԿՈՏԱՅՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԱՆԵՐԻՆ

18.03.2021 17:00

ՀՀ փաստաբանների պալատը երեկ՝ մարտի 17-ին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպած Երազանքի օր նախաձեռնության շրջանակներում հյուրընկալել էր «ՍՕՍ մանկական գյուղ Կոտայք» հիմնադրամի սաներին, ովքեր որոշել են ապագայում իրավաբան դառնալ:

Երեխաները շրջեցին հանրային պաշտպանի գրասենյակում, որտեղ ՀՊԳ ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Սարգսյանը ներկայացրեց հանրային պաշտպանների գործունեությունը և դատական գործերում նրանց կողմից ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու պայմանները, խոսեց հանրային պաշտպանների կողմից մարդկանց իրավունքները պաշտպանելու կարևորության մասին:

Փաստաբանական դպրոցում երեխաներին դիմավորեց դպրոցի փոխտնօրեն Արմեն Ասատրյանը: Նա երեխաներին ներկայացրեց հայ մեծանուն մտածողներ Մխիթար Գոշին, Սմբատ Գունդստաբլին, որոնց նկարները փակցված են դպրոցի պատին, խոսեց նրանց դատաստանագրքերի մասին: Դպրոցի փոխտնօրեն Արմեն Ասատրյանը ապագա գործընկերներին ներկայացրեց ընդունելության կարգը, կրթական մեթոդները՝ նշելով, որ ընդունելության և որակավորման քննությունները այնպիսի մեխանիզմով են կառուցված, որ դրանք անցկացվեն առավել օբյեկտիվ և արդար:

Շարունակելով շրջայցը ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում՝ երեխաները հանդիպեցին Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի հետ: Երեխաների հետ զրույցի ընթացքում Արա Ջոհրաբյանը պարզ օրինակներով խոսեց պետության, իրավունքի, արդարադատության համակարգում փաստաբանի կարևոր ու անփոխարինելի դերի մասին, պատասխանելով երեխաների հարցերին, պարզաբանեց, թե ինչ է անմեղության կանխավարկածը և այլն: Արա Ջոհրաբյանը, որպես ավագ ընկեր, երեխաներին խորհուրդ տվեց հույսը դնել սեփական ուժերի վրա և շատ աշխատել:

«Հաստատուն և կայուն է այն, ինչ դուք ստեղծում եք ինքներդ: Աստված Նոյին ասաց, տապան կառուցիր, որ ջրհեղեղից փրկվես: Աստված, տապան

չստեղծեց, այլ թողեց, որ Նոյն ինքը կառուցի և Նոյը երկար տարիներ իր քրտնաջան աշխատանքով տապան կառուցեց և փրկվեց: Անհնարին ոչինչ չկա, իսկ դժվարությունները մարդուն միայն կոփում են», - նշեց Արա Ջոհրաբյանը:

Վերջում պալատի նախագահը երեխաներին նվիրեց «Նոր կտակարան և Սաղմոսներ» գրքերը՝ հավելելով, որ աշխարհը ավելի լավ ու կատարյալ են դարձնում նախևառաջ բարությունն ու մարդասիրությունը: Նա նաև հույս հայտնեց, որ ներկաներից մեծ մասին ապագայում կտեսնի իր գործընկերոջ կարգավիճակում:




ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ
ԳՐԱՄԵՆՅԱԿ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })